

Ինչպէս տեսնում էք, վերջին տողերը մի քրիստոնէական չեղտ են մտցնում պօէմի մէջ: Եւ շատ հասկանալի է այդ հանգամանքը: Յովն. Թումանեանը նահապետական պայմանների մէջ ապրող գիւղացիութեան երգիչն է. իսկ այդ վերջինն ունի իւր որոշ աշխարհիմացութիւնը, որին և մատամբ հաւատարիմ է մնացել բանաստեղծը՝ երկրիս վրայ անմահութիւնը ներքողելուց յետոյ՝ մի ուրիշ աշխարհ երազելով «ուր չկայ մահ»—քրիստոնէական հանգերձեալ կեանքը .

(շարունակելի)

Ա. Տէրտեան

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

ՆՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1840—1911).

Քիչ չէ նրանց թիւը, որոնք ծնւում և մեռնում են, բայց շատ քիչ են նրանք, որոնք մեռնելուց յետոյ էլ դեռ շարունակում են ապրել: Դրանց կեանքն ու գործունէութիւնն է, որ անմահ մնալով յետնորդներին է անցնում որպէս անփոխարինելի և ամենատարժեքաւոր ժառանգութիւն: Այդպիսիների կեանքն է, որ դաւնում է հիմք և առաջնորդ գալիք սերնդի գործունէութեան համար: Ահա այդ քչերի թուին է պատկանում և հանդուցեալ Ղ. Աղայեանը, որն արդէն պատմութեան սեփականութիւն դարձած՝ այսուհետեւ դեռ էլի մնալու է մեզ համար որպէս ուսուցիչ—գաստիարակ: Մենք նրա մահուամբ թէև զրկուեցինք մի պատկառելի հօթանասնամեայ ծերունու շատ բան արտայայտող դէմք ու հասակ դիտելու հաճոյքից, զրկուեցինք մեզնից տասնեակ տարիներ առաջ կատարուած բազմաթիւ հասարակական—պատմական յիշատակարանների բնառն տակ տակաւին առոյգ և աշխոյժ մնացած Աղայեանից, բայց այդ բոլորի յիշողութիւնն է, որ այսօր մնում է մեզ որպէս ամենաթակազին սեփականութիւն, այդ բոլորի իդէալական մարմնացումն է մեր մէջ, որ արագացնելու է մեր սրտերի բաքախը, մեր յոյզերի ու զգացմունքների թափը, մեր մտքի թռիչքը, որոնք այնքան խիստ ու անզուսպ էին հանգուցեալի մէջ: Եւ այժմ այդ բազմաթիւ գանձերի աճեցման ու զարգացման ընդհատումն է, դր անկեղծօրէն, մանկան հոգու պարզութեամբ հանրօրէն սգում է՝ թէ՛ մամուլը, թէ՛ քաղաքը, թէ՛ գիւղը,

թէ արհեստաւորը, թէ բանւորը, և որ գլխաւորն է—դպրոցը իւր գեոտտի սաներով, որոնց մտաւոր, հոգեկան ու բարոյական դարգացման համար այնքան անպին նիւթեր է թողել հանդուցեալը:

Ղ. Աղայեանի կեանքն ու գործունէութիւնը փոքր ի շատէ պարզ կացուցանելու համար անհրաժեշտ է ծանօթանալ նրա նախնայրերի, նրանց բնակավայրի, ընտանեկան նիստ ու կացի, մի խօսքով այն մթնոլորդի հետ, որը կերտել ու կոփել է նրա հոգեկան ու ֆիզիքական աշխարհը: Թէև այս մասին պ. Լէօն «Հորիզոնում» տուել է մի բազմակողմանի ուսումնասիրութիւն, բայց մենք ևս աւելորդ չհամարեցինք ընդհանուր գծերով տալ այդ բոլորի համառօտ նկարագիրը. թէև մանրամասն ուսումնասիրութեան համար այդքանը շատ քիչ է:

Այն երկիրը, ուր ապրել են Աղայեանի նախնիքը, զուրկ է կուլտուրական բարձր ձեռնարկութիւններից, նա չի գեղեցկանում մարդկային ձեռքերով. այլ ինքն է, որ իւր գեղեցկութիւնն ու վեհութիւնը խկզբանէ անտի իւր մէջ ամփոփած ունի: Բարձրաբերձ քարաժայռերը, խոր խոր ձորերն ու կիրճերը, լայնածաւալ ու թանձրախիտ անտառները, սահանքաւոր գետերն ու առուակները, այդ բոլորը մի մի հրաշալիքներ են, որոնք ի միասին կազմում են մեր երկրի գեղատեսիլ անկիւններից մէկը՝ Ղարաբաղի լեռնային Խաչէն գաւառը:

Բայց բնութեան այս փառահեղութիւնն ու վեհութիւնը բաւարարում են մարդու միայն հոգեկան կարիքներին. իսկ ֆիզիքականը լրացւում է պարարտ և ընդարձակ դաշտավայրերի, լայնատարած արօտամարգերի, կուլտուրական հարուստ բուսականութեանց միջոցով: Իսկ որովհետև լեռնային Խաչէնը զուրկ էր այս վերջին նպաստաւոր պայմաններից, ուստի և նրա ժողովուրդը բնականօրէն դատապարտուած էր նոյնպիսի գաւն աղքատութեան, ինչպիսին որ տառապել է տալիս մեր երկրի շատ ու շատ մասերին: Այսպիսի դաժան և անողոք բնութեան մէջ էր ապրում խաչենցին, որին բաժին էր հասել մաքառել ու միշտ մաքառել: Բնութեան դէմ վարած երկարատև կռիւները նրան դարձրել էին յամառ ու յանդուգն՝ ինչպէս քարաժայռերը, անվեհեր ու բիրտ՝ ինչպէս ինքը բնութիւնը:

Ահա այսպիսի միջավայրում էր ապրում Աղայեանի պապը՝ Աղանց վերդին: Նա հարադատ ժառանգն էր իւր երկրի ու ժողովրդի. նրա համար ազգային պատիւը, ընտանեկան օջախը՝ հերոսին յատուկ իզիսութիւնը ամենաբարձր առաքինութիւններն են եղել. նա ամենեին չի խնայել իւր բազկի ոյժը ցոյց տալ նրանց, որոնք համարձակուել են թեթև վերաւորանք պատճառել իւր այդ սրբութիւններից որ և է մէկին. և նա իւր կեանքում

կոխների մէջ հարիւրի չափ մարդ է սպանել: Բայց այդ սպանութիւններից և ոչ մէկը նրա խղճի վրայ չի ծանրացել, բացի մէկ դէպքից, որի պատճառով էլ նա մինչև կեանքի վերջը իրեն հիկեդեցական ապաշխարանքի է ենթարկել: Նա գրել կարգալ էլ է իմացել: «Հայոց պատմութեանը բաւական տեղեակ մարդ էր», ասում է Աղայեանը. «մինչդեռ նրա ժամանակի հոգևորականները պատմութիւնից ոչ մի տեղեկութիւն չունէին»:

Աղանց Վերդին վիճակուած չէր իր սիրած հայրենիքում թաղուել:

XVII-րդ դարի վերջերին Ղարաբաղի մելիքների երկարատև կոխներից յետոյ երկիրը միանգամայն քայքայւում է սովի ու սրածովեան ճիրաններում, և հայութիւնը որոնում է իր կորցրած գլխի համար մի հանգստեան տեղ: Պարզամիտ հայ մելիքներից երկուսը՝ Մելիք-Աբով և Մելիք-Ջամշուդ, կարծելով թէ բուն երկրից դուրս էլ կկարողանան իրենց իշխանութեան տէրը լինել, սակաւաթիւ գաղթականների հետ տեղափոխւում են Վրաց սահմանները. առաջինը Բօլնիս, երկրորդը Լօռի Բօլնիսի գաղթականները մի փոքրիկ գիւղ են հիմնում և ի յիշատակ իրենց հայրենիքի գիւղը կոչում են Խաչէն: Այս գաղթականների մէջ է լինում և Աղանց Վերդին:

Աղայեանի հայրը՝ Ստեփանը նոյնպէս եղել է կրակոտ ու վառվռուն բնաւորութեան տէր մարդ: Նա իւր երիտասարդութիւնն անց է կացրել մեծ մասամբ սիրային արկածների ու հերոսական քաջագործութեանց մէջ, այն էլ գիւղի սահմաններից դուրս, որովհետև դրանց մէջ չէր կարող սահմանափակուել նրա բուն և անզուսպ բնաւորութիւնը: Նրան ընտանիքի հետ կապողը և տան անդամ դարձնողը եղել է իւր կին Հռիփսիմէն: Ամուսնութիւնից յետոյ արդէն նա սկսում է հետաքրքրուել գիւղի հասարակական գործերով և շուտով ազդեցիկ դիրք գրաւում:

1840 թ. ծնւում է մանուկ Ղազարոսը, որի սկզբնական կրթութութիւնը ըստ սովորականի տէր—թողիկեան ուղղութեամբ է լինում: Նրան գիր սովորելու են տալիս գիւղի մի գրագէտ կնոջ՝ Մանիշակի մօտ: Վերջինս լինելով վերին աստիճանի բարի և մեղմ բնաւորութեան տէր, կարողանում է իւր սանի սիրտը գէպի ինքը գրաւել, որով և մանուկը բացւում է նրա մօտ, գործն էլ բաւական յաջող ընթանում: Այս մասին Աղայեանը գրում է. «Մանկութեանս առաջին տարիներում մեր գիւղի մէջ ես մի բացառիկ ծնունդ էի, իբրև կարգից դուրս շնորհալի երեխայ: Նեղ էր և մութ իմ շրջանը, բայց ինչ որ կար այդ շրջանում գեղարուեստական համարուած ես եօթը տարեկան հասակումս արդէն բոլորն էլ ամփոփել էի իմ մէջ, և այդ, ի հարկէ, իմ զարմանալի

սուր յիշողութեան և ըմբռնման շնորհիւ: Իմ բոլոր դասերս նախ քան դաս առնելս բերան գիտէի՝ կոյր աշըղի պէս, որ կարդալ չիմանալով՝ ամեն ինչ բերան է անում, լսելով միայն: Երբ որ կարդալ սովորեցի, էլ հարկաւոր չէր, որ ամեն ինչ դաս առնէի: Ժամասացութիւնը բոլոր երկար քարոզներով և փոխերով, նոյն իսկ ժամումն էի բերան արել՝ լսելով միայն: Շատ ծիծաղելի էր իմ գիր սովորելը: Գրերի անունները գիտէի առանց նրանց ճանաչելու, փոխերն ասում էի առանց բառերը ճանաչելու»:

«Տառերի և բառերի վրայ չէի կարողանում կանգ առնել, չէի կարողանում աչք կենդրոնացնել նրանց վրայ, ուստաստում էի ճնճողուկի պէս: Սրա համար իմ ուսուցչուհին բարրարոսական դասատուութիւն հնարեց, դաս տալն սկսեց ոչ սկզբից, դէպի վերջը, ինչպէս անգիր էի արել, այլ վերջից դէպի սկիզբը, սկսած նոյն իսկ բառերից: Օր. «Համբարձի դաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»-ը պիտի սովորէի՝ «օգնութիւն ինձ եկեսցէ, ուստի ի լերինս իմ դաչս համբարձի»¹⁾:

Ահա այսպիսի անմարս և անանունդ նիւթերով էր կերակրւում մանուկ Աղայեանի մտաւրը, որով շատ բնականօրէն դիւզական մի սխօլաստիկ խալիֆայ պիտի դառնար նա: Բայց նրա մանկական կրթութեան այս չորութիւնը փոքր ինչ ամօքւում, կենսալից է դառնում շնորհիւ թափառական աշուղների յաճախակի այցելութեանց, «որոնք օրերով մնում էին մեր օղայում»-ասում է Աղայեան, զանազան դիւցազնական հեքիաթային պատմութիւններ անում, երգեր յօրինում, որոնք անջնջելի տպաւորութիւն են գործում Աղայեանի վրայ, այն աստիճան, որ նոյն իսկ ինքն էլ է սկսում երգեր յօրինելու փորձեր անել ու իր յաջողութեամբ հիանալ:

Աղայեանը 10 տարեկան էր, երբ արդէն նրա ուսուցչուհու՝ Մանիշակի դիտութիւնն սպառել էր և նա ոչինչ այլևս չունէր իւր տանին հաղորդելու: Սրանից յետոյ Աղայեանին ծնողներն ուղարկում են հարեան Շամշուղա գիւղը՝ Տէր Պետրոսի մօտ սովորելու: Աւելի խայտառակ էին այս քահանայի աւանդելիք նիւթերն ու մեթոդը. էլ Ալբերդի աստուածաբանութիւն, էլ Ս. գրքի մեկնութիւն, էլ զանազան կախարդական թալիսմաներ, և այդ բոլորը պէտք է նա անգիր անէր թէկուզ առանց հասկանալու: Ահա թէ դէպի ուր էր տանում Աղայեանին իւր մանկութիւնը. սակայն բարեբախտաբար այդպէս չշարունակուեց:

Շամշուղա գիւղում Աղայեանը հանդիպում է Մայիկօ անու-

ԾնԹ. Մտր5 1795 Թ. 758 Երես. Ղ. Աղայեան — «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը»:

նով մի աղջկայ, որը իւր գեղեցկութեամբ առաջին իսկ հայեացքից գրաւում է նրան. այսպէս որ մանկահասակ Ղազարոսը հանգիստը կորցրած սկսում է գիշեր ցերեկ իւր Մայիկօյի մասին մտածել. ուզում է ամբողջ ժամանակը նրա հետ անցկացնել. գիշերները դառանցում է նրա մասին, օրերով տանից բացակայում է իւր Մայիկօյին փնտռելու համար: Այս հանգամանքը խորապէս ազդում է նրա թէ մտաւորի և թէ ֆիզիքականի վրայ, դասերը կորցնում են իրենց նախկին հետաքրքրութիւնը և դրանց բոլորի փոխարէն նա սկսում է աշուղական երգերի ազդեցութեամբ ու նմանութեամբ երգեր յօրինել: Մինչդեռ մինչև այժմ Ղազարոսը իւր ընդունակութեամբ, սուր ըմբռնողութեամբ, աշխոյժ և կենդանի բնավորութեամբ գիւղում բացառիկ գիրք էք գրաւում և բոլորը նրան մատնվ էին ցոյց տալիս. այսուհետև, ընդհակառակը, նա ընկնում է ամենքի աչքից: «Մինչև այդ ժամանակ ես, որ մի հրեշտակ էի գեղացոց աչքումը իմ բնատուր շնորհքովս, այդ հանգամանքի պատճառով դարձայ մի հրէշ», ասում է ինքը՝ Աղայեանը: Ծնողների և ազգականների երկար խրատները չկարողացան ազդել նրա վրայ և այդ գրութիւնից հանել: Մի անգամ էլ հայրը սատարիկ զայրացած վրայ է հասնում, որ մի լաւ ծեծ տայ նրան, բայց նա փախչում է քեռոնց մօտ և այլևս տուն չի վերադառնում, վիրաւորուած համարելով իւր ինքնասիրութիւնը: Քիչ յետոյ մայրը նրան ուղարկում է Թիֆլիս իւր աղջկայ՝ Օսանի մօտ, մինչև, որ կրքերը կհանդարտուէին:

Թիֆլիսն արդէն Ղազարոսի համար բոլորովին նոր աշխարհ էր. այնտեղ նա գտնում է հետաքրքրութեան նոր-նոր առարկաներ, ձեռք է բերում նոր-նոր ընկերներ և հետզհետէ մոռացութեան տալով իւր նախկին սիրահարութիւնը կապւում է իւր իսկ շրջապատի հետ: Այդ ժամանակ Թիֆլիզում հայկական միակ կրթական հիմնարկութիւնը Ներսիսեան դպրոցն էր՝ Շանշեանի տնօրէնութեան օրով, որը որպէս կրթական հիմնարկութիւն պէտք է տեսնուէր, որ այնքան էլ նախանձելի պայմանների մէջ չէր գրուած: Ղազարոսը մտնում է այստեղ, բայց կարճ ժամանակուայ աշակերտութիւնից յետոյ դպրոցում տեղի ունեցող խռովութիւնների պատճառով դուրս է գալիս և մի քանի ընկերների հետ սկսում է պատրաստուել գիմնազիայի բարձր դասարանի աշակերտների մօտ, որոնք այդպիսով իրանց չքաւոր ընկերներին օգնութեան էին հասնում: Այստեղ արդէն չկար պաշտօնական ոչ մի յարաբերութիւն, ամեն ինչ ընկերական հողի վրայ էր գրուած, ազատ կարելի էր խօսել ամեն նիւթի մասին: Մասամբ Ներսիսեան դպրոցում, բայց գրեթե անորապէս այս շրջանում արդէն բացւում են Ղազարոսի աչքերը, նրա միտքն ազատւում է Տէր-Պետրոսի սխօլաստիկայի և նախա-

պաշարմունքների կաշկանդիչ կապերից, և նրա մէջ ազատ մտածելու, դատելու, ամեն ինչ քննադատութեան բովից անց կացնելու շրջանն է սկսւում: Որովհետեւ սոյնաման գաղափարների ըմբռնման և զարգացման համար շատ յարմար հող էր ներկայացնում Աղայեանի շուտ օգնորւող և հեշտութեամբ իւրացնող բնաւորութիւնը, ուստի և այս ուղղութեամբ էլ նա շատ առաջ է գնում:

Այսուհետեւ նրա միակ հոգսը իւրումը շարունակելով խնդիրն է դառնում, որովհետեւ քանի աւելի մօտիկից էր ծանօթանում իսկական գիտութեան, այնքան աւելի էր բորբոքւում նրա մէջ եղած կայծը և հացից ու ջրից էլ աւելի մեծ կարիք դարձնում իւր ուսման դործը: Բայց չէ՞ որ դրա համար նիւթական միջոցներ էին հարկաւոր, իսկ խեղճ Ղազարոսը սրտեղից կարող էր հողաւ այդ ամենը: Երկար մտանջութիւնից յետոյ որոշում է դառնալ գիւղ, յուսալով, որ թերեւ հօրից կարողանայ իւր կարիքը լրացնել: Այստեղ արդէն մեր աչքի առաջ է իրականութեան այն ցաւոտ կողմերից մէկը, որ «կոխ հների և նորերի մէջ» է կոչւում: Ղազարոսն ինչպէս տեսանք այժմ այն չէր արդէն, ինչ որ մի քանի տարի առաջ Տէր-Պետրոսի աշակերտ եղած ժամանակը: Նա քաղաք էր գնացել, տեսել էր կուլտուրայի ազդեցութիւնն ու հետեանքները, յարաբերութիւն էր ունեցել ժամանակակից գիտութեանը հետեող մարդկանց հետ, վերջնականօրէն համոզուել էր իւր առաջուայ սովորածների սուտ և պատիր նախապաշարմունքներով ողողուած լինելու մէջ: Բայց նրա հայրը չէ՞ որ նոյն նախկին Ստեփանն էր — «Արութիւն և Մանուէլ»-ի Աւետիքը, որի համար դեռ որպէս անհերքելի ճշմարտութիւններ էին մնացած բոլոր հեքեաթների մէջ պատմուածները, բոլոր առասպելները, բոլոր դիւցազնական պատմութիւնները և այլն: Անշուշտ այսպիսի տրամադծօրէն հակառակ հայեացքներ և մտածելակերպեր ունեցողների մէջ, որոնց բնաւորութիւններն էլ մէկ մէկուց աւելի տաք ու բռնկուող էին, հաշտութիւն երբէք չէր կայանայ, մանաւանդ, որ յաճախ առիթ էր եղել միմեանց հետ ընդհարուելու և միմեանց յամառութեանը համոզուելու: Այս անգամուայ հանդիպումն էլ նոյնն է ապացուցում, որից երևում է, որ «վէմն ապառաժի է հանդիպել» ինչպէս ինքը Աղայեանն է առում, և շատ բնականօրէն նրա ցանկութիւնը անիրագործելի է մնում. այն էլ ոչ թէ նրա համար, որ հայրը նիւթապէս օգնելու հնարաւորութիւն չունէր, այլ որովհետեւ նրա հայեացքով մինչ այդ ստացած ուսումն էլ դեռ շատ էր, քանի որ «շատ կարդացողները անհաւատ են դուրս դալիս»: «Արութիւն և Մանուէլ»-ի այն գլուխը, ուր Աղայեանը պատմում է այս հանդիպումը, շատ ճիշտ կերպով կոչել է «հինը և նորը»:

և այդ հնի ու նորի ընդհարմամբ սկիզբն է դրում Աղայեանի կեանքի մի նոր շրջանի, որն այնքան լի է հոգեկան բարդ վիճակների կազմակերպմամբ, հերոսական արկածներով ու թափառումներով: Աղայեանի կեանքի այս շրջանը Լօռիում և Շիրակում անցկացրած հօթ երկար ու ձիգ տարիներ են, երբ նա ամենից աւելի շատ է ծանօթացել բուն ժողորովրդի հարազատ սովորութիւններին, ընտանեկան նիստ ու կացին, բարոյական աշխարհայեացքին ևլն, որտեղ նա իրօք վարուել է բապեճեւի թեւադրութեամբ և միշտ ուրնողական վիճակում: Նա (Արութիւնը—Ղ. Աղայեանը) պատում էր Լօռու և Շիրակի դիւղերը, ուր մի տեղ վարժապետ էր, միւսում տիրացու, մի երրորդում թափառական որսորդ, ևլն: Ոչ մի տեղ մի քանի ամիս չէր մնում, ոչ մի տեղ նրա ոտքը չէր կապւում: Նա կարծես մի բան էր կորցրել, ման էր գալիս որ դանի, բայց չէր գտնում: Չէր խմանում, որ կորածն ինքն է, ինքը պիտի գտնուէր ուժ և իցէ ձեռքով և լոյս աշխարհ հանուէր: Շատ անգամ սարից սար, հովտից հովտ անցնելով որսորդութիւն էր անում և նրանով հոգում իւր հագուստն ու կապուստը: Նա թափառում էր անգիսակից, ինչպէս մի վայրենի¹: Բայց նա մինչև վերջը չի մնում այս կիսավայրենի դրութեան մէջ, այլ երկար թափառումներից յետոյ բախար նրան ձգում է նարից այն նախկին կուլտուրական վայրը, ուր եղել էր որպէս դպրոցի աշակերտ դեռ փոքր հասակում: Աշակերտ ժամանակը, երբ նա դրսից նիւթական օգնութիւն չստացաւ, այլևս անկարող էր քաղաքում ապրել, բայց այս անգամ արդէն զինուած էր գոյութեան կուում մասնակցելու զէնքերով, և այդ զէնքերը երիտասարդական ոյժն ու թարմութիւնն էին: Եւ իրօք, նա այդ զէնքերով էլ կարողանում է հաց ձարել տպարանական բանուոր մտնելով Համբարձում Էնֆիաջեանի տպարանը, որտեղ գործի գլուխ էր կանգնած նաև Մարկոս Աղարէկեանը, Պէտք է ասել, որ այս տպարանը լոկ սովորական առևտրական մի հիմնարկութիւն չէր, այլ աւելի կուլտուրական, որի շուրջն էին հաւաքուած ժամանակի գրականագէտներից շատերը: Այստեղ էր հրատարակւում «Կոռնիկ»ը, որը նպատակ էր դրել մեծապէս նպաստել աղ-գային ինքնագիտակցութեան զարգացմանը և յետ չէր մնում ժամանակակից հրատարակութիւններից. ինչպէս են «Մեղու»ն, «Հիւսիսափայլը» ևլն: Հազարոսն այս շրջանում խոշոր յառաջադիմական քայլեր է անում և կարճ ժամանակից ամենազլխաւոր գրաշարը գաւնալով, նոյն իսկ իւր ձեռքն է առնում տպարանի հրակողութիւնը, վայելելով տէրերի բացարձակ վստահութիւնը: Հա-

զարտան այստեղ սոսկ զրաշար չէր, նա արդէն «Կոռնկ»ի սրբազրիչ էր և ձեռք էր բերել ծանօթների լայն շրջան, որոնցից մեծապէս կարող էր օգտուել, այնպէս որ հետզհետէ դէպի ուսումը տաժած նախկին ծարաւը բուռն թափով հանդէս է դալիս և սկսում կանչել նրան: Աղայեանն այստեղ փորձում է գրել մի քանի ոտանաւորներ, որոնք և տպւում են «Կոռնկ»ում: Բայց այդ բոլորը նրա աչքում չնչին էին և նա որոշում է թողնել ամեն բան ու գնալ ուսումը կատարելագործելու:

Կը շարունակուի:

Աբէլ Սարկաւազ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ի

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. պատարագից յետոյ կատարուեցին հանգստեան պաշտօններ կաթողիկոսական Ամեն. Տէր Տեղակալի, միաբանութեան և բաղմաթիւ ժամատօրների ներկայութեամբ Յունիսի 26-ին գրական և մանկավարժական վաստակաւոր հանգ. Ղազարոս Աղայեանի յիշատակին և Յունիսի 3-ին բարեգործ վաճառական հանգ. Սարգիս Գալստեան Ջանումեանցի յիշատակին:

Տարւոյս յունիսի 26-ին ուսումնարանական աղևորութեամբ Մայր Աթոռ ժամանեցին Թաւրիզի կենդրոնական դպրոցի Ե. դասարանի աշակերտներ և չորս ուսուցիչներ Լիւաւայի տեսուչ և կենդրոնական դպրոցի ուսուցիչ Պ. Կարապետ Պրոնեանի առաջնորդութեամբ: Ուղևոր գըպրոցականները հինգ օր հիւրասիրուելով Մայր Աթոռում՝ տեսան բոլոր նշանաւոր հաստատութիւններն ու հնութիւնները, Ս. Թարգմանչաց տօնին գնացին Օշական, ուր հիւրասիրուեցին տեղւոյն Մամբրէ քահանայի տանը, այցելեցին Աշտարակ գիւղը և Մողնի, Յովհաննուվանք ու Սաղմոսավանք վանքերը և վերադառնալով Մայր Աթոռ՝ յունիսի 1-ին շարունակեցին իրանց ուղևորութիւնը դէպի Անի, Սանահին, Հաղբատ և Թիֆլիզ, իսկ վերադարձին պէտք է մանեն Սևանի վանքը: